# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 2
# ԵՄ-ԳՀԾՁԲ-21/136 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ
# ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

**ք. Երևան** **04.10.2021թ.**

29.09.2021-04.10.2021թթ. ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում տեղի ունեցավ գունավոր տպագրական ծառայության ձեռքբերման ԵՄ-ԳՀԾՁԲ-21/136 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ Ընթացակարգ) գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի հետևյալ անդամները.

| | |
|---|---|
| Ա. Ղուկասյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Տեխնիկական բաժնի պետ, |
| Ա. Սամվելյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Տեխնիկական բաժնի պետի տեղակալ, |
| Ռ. Ներսիսյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Երթևեկություն» մասնաճյուղի պետի ժ/պ, |
| Ս. Քոչարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի «Երթևեկություն» մասնաճյուղի գործավար-օպերատոր, |
| Վ. Իսկանդարյան՝ | «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի Գործերի կառավարիչ: |

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Ղուկասյանը: Հանձնաժողովի նիստին ներկա էր Հանձնաժողովի քարտուղար Մ. Ղազարյանը՝ «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը:

Հաշվի առնելով, որ Հանձնաժողովի կազմը բաղկացած է հինգ անդամից, իսկ Հանձնաժողովի նիստին մասնակցում էին Հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջների համաձայն Հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

## 1. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց հաստատել Հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Գնման հայտով սահմանված՝ Ընթացակարգի շրջանակում գնվելիք գնման առարկաների գների մասին:
3. Ընթացակարգին ներկայացված հայտերը գնահատելու մասին:
4. Բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայության և հրավերի պայմաններին համապատասխանության մասին:
5. Ընթացակարգի մասնակիցների առաջարկած գների, ընտրված և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տվյալների մասին:
6. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

7. Կատարված հարցումների, պարզաբանումների, հիմնավորումների և հրավերում կատարված փոփոխությունների, հակաօրինական գործողությունների, ներկայացված բողոքների մասին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 2. ԳՆՄԱՆ ՀԱՅՏՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ՝ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԳՆՎԵԼԻՔ ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2021թ.-ի սեպտեմբերի 29-ին, ՀՀ, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի շենքում ժամը 10:00-ին նախագահը նիստը հայտարարեց բացված և հայտարարեց գնման հայտով սահմանված ընդհանուր գները.

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| 1 | Գունավոր տպագրական ծառայություն | 144,000.00 |

Ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 3. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԵՐԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտ կազմել և ներկայացրել են ներքոնշյալ մասնակիցները.

| Հ/Հ | Մասնակցի անվանումը | Մասնակցի վերաբերյալ տվյալներ | | | |
|---|---|---|---|---|---|
| | | ՀՎՀՀ | գործունեության հասցե | Հեռախոս | էլ. հասցե |
| 1 | «Ռոզա Մկրտչյան» Ա/Ձ | 35170959 | ՀՀ, ք. Երևան, Արտաշիսյան փող, 62 շենք, 15 բն., | 093361502 | chakhoyan.hayastan@gmail.com |
| 2 | «Սեկո-Պրինտ» ՍՊԸ | 00910657 | ՀՀ, ք. Երևան, Մ. Բաբաջանյան 3/9 | 094687069 | info@seko.am |
| 3 | «ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ տպագրատուն» ԱՀ ԲԲԸ | 02502806 | ՀՀ, ք. Երևան, Նոր Նորքի 1-ին զանգված, Ս. Սաֆարյան 8/8 | 010673999 | info@veprint.am |

Հանձնաժողովը գնահատեց հայտ կազմելու և ներկայացնելու համապատասխանությունը սահմանված կարգին և արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված հայտերը կազմված և ներկայացված են Ընթացակարգի հրավերով/ծանուցմամբ/ սահմանված պահանջներին համապատասխան:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 4. ԲԱՑՎԱԾ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՅՏՈՒՄ ՊԱՀԱՆՋՎՈՂ (ՆԱԽԱՏԵՍՎԱԾ) ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը գնահատեց բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող (նախատեսված) փաստաթղթերի առկայությունը և դրանց կազմման

համապատասխանությունը հրավերով սահմանված վավերապայմաններին և արձանագրեց, որ.

1. «Ռոզա Մկրտչյան» Ա/Ձ – Մասնակցի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերով, այդ թվում Հավելված 2-ով, չեն պահպանվել հրավերով սահմանված վավերապայմանները, մասնավորապես՝ նշված չէ մասնակցի ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը:

2. «Սեկո-Պրինտ» ՍՊԸ – սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված Հավելված 1-ից բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը: Եթե «Սեկո-Պրինտ» ՍՊԸ-ն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ, կամ եթե այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, ապա դիմում-հայտարարությունը լրացնելիս Հրավերով Հավելված 1-ով ներկայացված «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը» բառերը պետք է փոխարինել «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի» բառերով և հայտով ներկայացներ նաև հրավերով նախատեսված հավելված 1.3-ը:

3. «ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ տպագրատուն» ԱՀ ԲԲԸ - սույն գնման ընթացակարգին մասնակցության հայտով ներկայացված Հավելված 1-ից բացակայում է իրական շահառուների վերաբերյալ տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը: Եթե «ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ տպագրատուն» ԱՀ ԲԲԸ-ն «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի պետական հաշվառման մասին» օրենքի հիման վրա իրական շահառուների վերաբերյալ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող իրավաբանական անձ չէ, կամ եթե այդպիսի իրավաբանական անձ է սակայն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ պարտավոր չէր իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցել իր իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունները, ապա դիմում-հայտարարությունը լրացնելիս Հրավերով Հավելված 1-ով ներկայացված «տեղեկություններ պարունակող կայքէջի հղումը» բառերը պետք է փոխարինել «հայտարարագիր՝ համաձայն հավելված 1.3-ի» բառերով և հայտով ներկայացներ նաև հրավերով նախատեսված հավելված 1.3-ը:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 5. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿԱԾ ԳՆԵՐԻ, ԸՆՏՐՎԱԾ ԵՎ ՀԱՋՈՐԴԱԲԱՐ ԱՅԼ ՏԵՂԵՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտեր ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ մեկ թվով արտահայտված, հիմք ընդունելով տառերով գրվածը:

| | | |
|---|---|---|
| 1 | «Սեկո-Պրինտ» ՍՊԸ | անբավարար |
| 1 | «ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ տպագրատուն» ԱՀ ԲԲԸ | անբավարար |

5. Համաձայն Կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների՝ «Սեկո-Պրինտ» ՍՊԸ-ի և «ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ տպագրատուն» ԱՀ ԲԲԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկել լիազորված մարմին՝ վերջիններիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 6. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը որոշեց.

1. Ընթացակարգը հայտարարել չկայացած, հիմք ընդունելով գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված պահանջները:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

## 7. ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ, ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ, ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ և ՀՐԱՎԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՀԱԿԱՕՐԻՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովը արձանագրեց, որ.

1. Ընթացակարգի հրավերում փոփոխություններ չեն կատարվել:

2. Գնման վերաբերյալ հարցումներ չեն ստացվել, պարզաբանումներ չեն ներկայացվել, հիմնավորումներ չեն պահանջվել:

3. Գնման գործընթացի շրջանակներում հակաօրինական գործողություններ չեն հայտնաբերվել:

4. Գնման գործընթացի վերաբերյալ ներկայացված բողոքներ չեն եղել և դրանց վերաբերյալ կայացված որոշումներ չեն ընդունվել:

Կողմ՝ 5, դեմ ՝ 0:

*Հանձնաժողովի նախագահ՝*

Աղասի Ղուկասյան

*Հանձնաժողովի անդամներ՝*

Արսեն Սամվելյան

Ռոբերտ Ներսիսյան

Սոֆիյա Քոչարյան

Վոլոդյա Իսկանդարյան

*Հանձնաժողովի քարտուղար՝*

Մարիա Ղազարյան